



### **Ազգային գործարար օրակարգի մասին (ԱԳՕ)**

Ազգային գործարար օրակարգը հանդիսանում է կարևոր գործիք գործարար միջավայրի բարելավման և ներդրումների խթանման առումով: Այն հնարավորություն է տալիս գնահատել տնտեսական զարգացմանը խոչընդոտող հիմնական արգելքները և պետական-մասնավոր երկխոսության միջոցով քննարկել դրանց վերացման համար անհրաժեշտ բարեփոխումների հնարավորությունը:

Ազգային գործարար օրակարգի ձևավորման գործընթացին նպաստելու նպատակով ԳՇՊՑ-ն Երևանում և մարզերում իրականացրեց համապարփակ հարցախույզ, որի օգնությամբ փորձեց բացահայտել և գնահատել մեր երկրում ձեռնարկատիրության զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոնները: Հարցախույզի մասնակիցներին առաջարկվել էր նշել առավել յուրջ օրենսդրական վարչական, ինստիտուցիոնալ արգելքները, որոնք խոչընդոտում են մասնավոր հատվածի զարգացմանը Հայաստանում, քաղաքական և իրավական տեսանկյունից սահմանել և նշել տնտեսական բարեփոխումների իրականացման առումով կարևոր և խնդրահարույց ոլորտները, ինչպես նաև բացահայտել մասնավոր հատվածի շահերից բխող մոտեցումները: Ընդհանուր առմամբ, հարցախույզի արդյունքները ևս մեկ անգամ հաստատեցին գործարար հանրության շահագրգիռ վերաբերմունքը բարեփոխումների հանդեպ և պատրաստակամությունը օժանդակելու բարեփոխումներին գործընթացին՝ արդյունքում ակնկալելով ունենալ քաղաքակիրթ և բարենպաստ գործարար միջավայր:

Համաձայն հարցախույզի արդյունքների, ձեռներեցները նշում են հետևյալ հիմնական խնդիրները, որոնք խոչընդոտ են հանդիսանում գործարար միջավայրի զարգացման համար՝ անարդար մրցակցային միջավայրը, կոռուպցիան, հարկային համակարգը, անկատար պետական ստուգումների համակարգը, անարդյունավետ ՓՄՁ քաղաքականությունը, անմատչելի ֆինանսական ռեսուրսները և բիզնեսի համար անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացման թույլ մակարդակը:

Հարցախույզի արդյունքները լայն քննարկման առարկա հանդիսացան կյոր-սեղան միջոցառումների ժամանակ, որոնք կազմակերպվեցին ԳՇՊՑ-ի կողմից Կոտայքի, Վայոց Ձորի, Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերում: Կյոր-սեղանների մասնակիցները, հիմնականում տեղի փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի ներկայացուցիչներ, իրենց կարծիքները արտահայտեցին հարցախույզի արդյունքների վերաբերյալ և գնահատականներ տվեցին գործարար միջավայրում, մասնավորապես ՓՄՁ ոլորտում առկա խոչընդոտների և խնդիրների վերաբերյալ: Զննարկումների ժամանակ բարձրաձայնված խնդիրները և հնչեցված առաջարկությունները կամփոփվեն ԳՇՊՑ քարտուղարության կողմից և կարտացոլվեն Ազգային գործարար օրակարգում:

Գործարար շահերի պաշտպանության ցանցը անց կացրեց նաև աշխատանքային քննարկում, որին մասնկացում էր նաև ցանցի գործընկեր կազմակերպության՝ Մասնավոր ձեռնարկատիրության միջազգային կենտրոնի ներկայացուցիչը, խորհրդատու Կարմեն Ստանիլան: Կ. Ստանիլան Ցանցի անդամներին ներկայացրեց այլ երկրների փորձը Ազգային գործարար օրակարգերի ձևավորման վերաբերյալ:

Քննարկման ընթացքում ցանցի անդամների կողմից ամբողջականացվեցին և սահմանվեցին այն հիմնական առաջնահերթ ոլորտները, որոնցում առկա կարևոր խնդիրները հիմք կհանդիսանան Ազգային գործարար օրակարգի ձևավորման համար: Դրանք են՝ հարկային ոլորտը, ՓՄՁ զարգացման քաղաքականությունը և տեսչական ստուգումների ոլորտը: Միաժամանակ ձևավորվեցին նաև համապատասխան աշխատանքային խմբեր՝ յուրաքանչյուր ոլորտի խնդիրների և դրանց լուծման համար անհրաժեշտ առաջարկությունների վրա աշխատելու համար: